Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 28-ի N 367 - Ն որոշման

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՅՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպությունը (այսուհետ՝ դիմումատու) Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն դիմումին կից ներկայացվող ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները ներկայացնում է սույն պահանջներին համապատասխան:

2. Դիմումատուն լիազոր մարմին է ներկայացնում՝

1) ընդերքօգտագործման ոլորտում ունեցած մասնագիտական աշխատանքի փորձի մասին տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի.

2) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) կամ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախագծով (այսուհետ՝ նախագիծ) պահանջվող ինժեներատեխնիկական կազմի առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի, իսկ համապատասխան մասնագետների հետ կնքված պայմանագրերի դեպքում՝ նաև համապատասխան պայմանագրերի պատճենները.

3) ծրագրի կամ նախագծի իրականացման համար անհրաժեշտ՝

ա. տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 3 ձևի, իսկ օրենքով սահմանված կարգով օգտագործման իրա-

վունքով պատկանող տեխնիկական միջոցի համար՝ նաև համապատասխան պայմանագրի պատճենը,

բ. ֆինանսական միջոցների մասին տեղեկանք՝ համաձայն N 4 ձևի, իսկ տրամադրված վարկային գծի կամ բանկային երաշխիքի, կամ ֆինանսական միջոցների փոխառության առկայության դեպքում՝ նաև համապատասխան ֆինանսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը.

4) Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային պարտավորություններ չունենալու մասին տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

3. Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունք հայցելու համար կարող են դիմել առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող կազմակերպությունները, իսկ մասնագիտական աշխատանքի փորձի բացակայության դեպքում՝ 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող՝ ինժեներատեխնիկական կազմ կամ մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող մասնագետների հետ կնքված պայմանագրեր ունեցող կազմակերպությունները:

4. Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունք հայցելու համար կարող են դիմել առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող կազմակերպությունները, իսկ մասնագիտական աշխատանքի փորձի բացակայության դեպքում՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող՝ ինժեներատեխնիկական կազմ կամ մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող մասնագետների հետ կնքված պայմանագրեր ունեցող կազմակերպությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԻ Մ Ա Ս Ի Ն

Սույնով _____-ը հայտնում է, որ դիմումը
(կազմակերպության անվանումը)

ներկայացնելու տարվան նախորդող տարիների ընթացքում ընդերքօգտագործման ոլորտում իրականացրել է աշխատանքներ (այդ թվում՝ նաև պայմանագրային), որոնց ցանկը ներկայացվում է ստորև.

NN ը/կ	Նախկինում կատարված աշխատանքների՝ ընդերքօգտագործման ձևերը
1	2
1.	
2.	
3.	

_____ _____
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԿԱՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Մասնագետի անունը, ազգանունը	Որակավորումը	Մասնագիտական աշխատանքի փորձը	Նախկինում կատարած աշխատանքի անվանումը
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ _____

ինժեներատեխնիկական կազմը հավաստող աշխատանքային պայմանագրերի պատճենները:

_____ _____

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.

Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Տեխնիկական միջոցի անվանումը	Քանակը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը	Տեխնիկական միջոցի տեխնիկական վիճակը (սարքին է կամ ենթակա է վերանորոգման)
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ _____ տեխնիկական միջոցների նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող պայմանագրերի պատճենները:

_____ _____

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.

Ձև N 4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ, ԿԱՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____-ը հավաստում է, որ իր
(կազմակերպության անվանումը)

ֆինանսական միջոցները_____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

դրությամբ կազմում են _____ դրամ:

Կից ներկայացնում եմ _____ ֆինանսական կազմակերպության հետ կնքված վարկային գծի տրամադրման կամ բանկային երաշխիքի, կամ ներգրավված ֆինանսական միջոցների փոխառության մասին պայմանագրի պատճենը:

_____ _____
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.